



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ապրիլի 2014 թվականի N 532 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 19-Ի N 363-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո Ր Ո Շ ՈՒ Մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N 1414-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեից գումար հատկացնելու մասին» N 363-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման NN 1, 2, 3, 4, 5 և 6 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն NN 1, 2, 3, 4, 5 և 6 հավելվածների.

2) որոշման 2-րդ կետում «5,237,795.0 թիվը փոխարինել «1,013,497.0» թվով.

3) որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում «364,000.0», 2-րդ ենթակետում «593,860.0», 3-րդ ենթակետում «502,995.0», 4-րդ ենթակետում «736,590.0», 5-րդ ենթակետում «858,320.0», 6-րդ ենթակետում «551,000.0», 7-րդ ենթակետում «614,385.0», 8-րդ ենթակետում «357,000.0», 9-րդ ենթակետում «195,400.0» և 10-րդ ենթակետում «464,245.0» թվերը համապատաս-

խանարար փոխարինել «84,897.0», «238,000.0», «317,000.0», «51,000.0», «84,000.0», «71,900.0», «97,700.0», «23,000.0», «12,400.0» և «33,600.0» թվերով.

4) որոշման NN 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15 և 16 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն NN 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15 և 16 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

2014 թ. մայիսի 23
Երևան

Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

